

ԱՐՄԵՆ Շ. ՍԱՐԳՍՅԱՆ

քանասիրական գիր. թեկնածու, ՀԱԻ

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ
ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄ-ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՒ ԴՐԱՆՑ
ՏԱՐԲԵՐԱԿԱՅԻՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԸ**

Իերևա քչերին է հայտնի, որ մամուլում Հովհ. Թումանյանի առաջին տպագիր գործերը եղել են Լոռու ժողովրդական երգիծապատումները եւ գվարճախոսությունները: Թումանյանագետներին դա անհայտ է եղել մինչև գրողի մի փունջ գրառումների ի հայտ գալը: 1963 թ. վաստակաշատ գրականագետ Էդ. Զրբաշյանը մի հոդված է տպագրում¹, որտեղ ներկայացվում են նաև 1887 թ. մամուլում լույս տեսած թումանյանական գրառումները: Դրանք տեղեկություններ էին Դսեղի աշխարհագրական դիրքի, կենցաղի ու հնությունների վերաբերյալ, ինչպես նաև՝ մի ավանդագրույց եւ 12 անեկդոտ: Այդ ժամանակ Էդ. Զրբաշյանին ծանոթ են եղել Հովհ. Թումանյանի գրառումների միայն 1887 թվականին տպագրված նյութերը:

Հետագա պրպտումները նոր բացահայտումների են հանգեցնում: Գրականության եւ արվեստի թանգարանում պահպանվող՝ բանաստեղծի պատանեկության եւ երիտասարդական տարիների ամենամտերիմ ընկերներից մեկի՝ Անուշավան Աբովյանի «Իմ հիշատակարանը» ձեռագիր հուշերի վկայություններից մեկը հնարավորություն է տալիս լույս սփռել ոչ միայն 1887 թ. «Նոր-Դար» օրաթերթում երեք աստղանիշով տպագրված վերոնշյալ 12 նյութերին, այլև 1889-1890 թթ. նույն պարբերականի համարներում՝ կրկին նմանատիպ աստղանշային մակագրությամբ տպագրված եւս տասը ժողովրդական երգիծական ստեղծագործությունների թումանյանական գրառումներին²: Հիշատակարանում Ան. Աբովյանը գրում է. «Թումանյանը գրա-

¹ Էդ. Զրբաշյան, Նորահայտ էջեր Թումանյանի ժառանգությունից, ՏՀԳ, 1963, թ. 12, էջ 69-76:

² Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ)՝ 10 հատորով, հ. 5, Հավելված. Անեկդոտներ Լոռվա կյանքից, Երևան, 1994, էջ 580-588: Մեջբերվող

կան ասպարեզ մտավ «Նոր-Դար» օրաթերթում Դսեղ գյուղի ընդհանուր նկարագրությամբ եւ գյուղացիների նիստ ու կացի մասին մի նամակ տպելով: Այնուհետեւ սկսեց լոռեցիների կյանքից մի շարք անեկդոտներով ողողել «Նոր-Դարի» էջերը»³: Հենց այս հիշատակությունն էլ հնարավորություն է տալիս հավաստելու, որ մամուլում Թումանյանի առաջին տպագիր գործը եղել է ոչ թե «Շունն ու կատուն», այլ Դսեղի աշխարհագրական դիրքի, կենցաղի ու հնությունների վերաբերյալ տեղեկությունները, մի ավանդազրույց եւ լոռեցիների ժողովրդական երգիծական մանրապատում-զվարճախոսությունների 22 սնուշներ:

Նշենք նաեւ, որ ԺԹ. դարի առաջին կեսը Երոպայում, այնուհետեւ արեւելքի որոշ երկրներում, նշանավորվել էր ազգագրական եւ բանահյուսական արժեքները պեղելու, վեր հանելու, հրատարակելու եւ դրանց մեջ ազգայինի վաղնջական արմատները բացահայտելու աննախադեպ մի շարժումով, որի սերմերը, շնորհիվ Աբովյանի եւ Թադիաղյանի գրական, թարգմանական, մանկավարժական, ինչպես նաեւ ժողովրդական բանավոր ստեղծագործությունների հավաքչական գործունեության, կարճ ժամանակ անց իրենց ծիլերն են տալիս հայկական միջավայրում: Այդ երևույթը առավել մեծ թափ է ստանում հատկապես ԺԹ. դարի երկրորդ կեսից՝ ոչ միայն տպագիր մամուլի աշխուժացմամբ, որոնց էջերում սկսում են հաճախակի հրապարակվել պատմական Հայաստանում եւ նրան հարակից տարածքներում ապրող հայության բանավոր մշակութային արժեքները, այլեւ ազգագրական եւ բանահյուսական նյութերի մի շարք ժողովածուների (այդ թվում նաեւ անեկդոտների) հրատարակությամբ:

Անշուշտ, գրական ասպարեզ դեռ ուռք չդրած, սակայն հետաքրքրությունների լայն մտահորիզոն եւ ընթերցանության անհագ ծարավ ունեցող երիտասարդ Թումանյանն իր հնարավորությունների սահմաններում հաղորդակցվել էր դրանց: Նա ոչ միայն ունկնդիրն ու կրողն է եղել իր հայրենի բնաշխարհի ժողովրդական բառ ու բանի, այլեւ պատանեկան տարիներից դրանք գրառելու երազանքներ ու ծրագրեր է ունեցել, որոնց մասին կրկին պատմում են Ան. Աբովյանի հուշերը. «Ցանկանում էինք դեռ ուսում առնել, հետո գնալ գյուղերը, մտնել ժողովրդի մեջ ու գրի առնել հին ավանդություններ, լեգենդներ, հեքիաթներ, առակներ, դյուցազներգություններ, անեկդոտ-

թումանյանական գրառումների, նամակների եւ հուշագրությունների ուղղագրությունը եւ կետադրությունը ներկայացվում է ըստ համապատասխան սկզբնաղբյուրի:

³ «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Երևան, 1969, էջ 225:

ներ ու առասպելներ եւ հրատարակել: Իսկ գիտեցածներս սկսել էինք գրի առնել եւ կարդալով հրճվում էինք ու ոգևորվում...»⁴:

Ապագա բանաստեղծն ու մշակութաբանը Ան. Արովյանի եւ վերջինիս համագյուղացի ուսուցիչ Եգոր Խարազյանի հետ մտադիր է եղել ձեռնարկել հայ ժողովրդական երգիծական ստեղծագործություններին հանրությամբ հաղորդակից դարձնելու գործը: Մինչև ժողովածուի հրատարակությունը նա իր գրառած՝ Լոռու երգիծական մանրապատումներից ու զվարճախոսություններից պարբերաբար տպագրության է հանձնում «Նոր-Դար»-ին, որոնք հրատարակվում են 1887, 1889 եւ 1890 թթ. համարներում:

Որոշ ժամանակ անց, սակայն, Թումանյանը հուսախաբ է լինում, քանզի նրան հայտնի է դառնում, որ «Նոր-Դար»-ում տպագրված իր նյութերը, առանց գրառողի իմացության, նույնությամբ կամ լեզվաճանկան որոշ փոփոխություններով հայտնվել են Սմբատ Շահագիզյանի կողմից պատրաստվող «Ծիծաղի տոպրակ» անեկդոտների ժողովածուում:

Ռուսաստանի Կամենեց-Պոդոլսկում գտնվող Անուշավան Արովյանին 1890 թ. օգոստոսի 27-ին գրած նամակներից մեկում Հովհ. Թումանյանը խոր հիասթափությամբ, բայց միեւնոյն ժամանակ վեհանձն պահվածքով իր վերաբերմունքն է արտահայտում այդ գրքի եւ նրա հեղինակի մասին. «Չգիտեմ քեզ գրել եմ թե չէ, որ ... Սմբատ Շահագիզը՝ անեկդոտների գիրք է հրատարակում⁵. այն գիրքը, որի միտքը ծագեցնելը քեզ է պատկանում, եւ որ պետք է երեքով (իմա՝ Հովհ. Թումանյանը, Ան. Արովյանը եւ Ե. Խարազյանը-Ա. Ս.) հրատարակեինք: Մի մասը արտագրած է «Նոր Դար»-ից, – գրում է Թումանյանը նամակում ու ցավով ավելացնում, – Անունը դրել են «Ծիծաղի տոպրակ»: Անունն ավելի գեղեցիկ է, քան թե յուր վարմունքը... Ես ոչինչ չասացի»⁶:

Ի դեպ, Թումանյանի Երկերի լիակատար ժողովածուի (10 հատոր) 5-րդ հատորի հավելվածին վերաբերող ծանոթագրությունում կազմողները սխալմամբ նշել են, որ «սկզբնապես գիրքը կազմելու գործին պետք է մասնակցեին նաեւ Ան. Արովյանն ու Հ. Թումանյանը: Սակայն հետո շուրավերցի ուսուցիչ Սմբատ Շահագիզյանը հեռացրել է նրանց այդ աշխատանքից...»⁸:

⁴ Անդ, էջ 222-223:

⁵ Խոսքը 1890-ական թվականներին շուրավերցի գավառական ուսուցիչ Սմբատ Շահագիզյանի մասին է:

⁶ Սմբատ Շահագիզյանը «Ծիծաղի տոպրակ»-ը հրատարակել է 1892 թվականին:

⁷ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Նամակներ 1885-1922, Նամակ Անուշավան Արովյանին Թիֆլիս-Կամենեց-Պոդոլսկ, 1890 թ., օգոստոսի 27, Տիֆլիս, 1945, էջ 22: Նույնը տե՛ս՝ ԵԼԺ, հ. 9, 1997, էջ 26:

⁸ Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 5, էջ 818:

Այդ կապակցությամբ փաստենք, որ Ան. Արովյանի հիշատակարանում հստակ նշված է, որ սկզբում երկուսով՝ Ան. Արովյանն ու Հովհ. Թումանյանը, այնուհետև՝ երեքով (այդ աշխատանքին ներգրավվում է նաև փորձառու Ե. Խարազյանը) պետք է իրականացնեին անեկդոտների ժողովածուի հրատարակության գործը: Սմբատ Շահագիզյանի խնդրանքը՝ իրեն եւս ներգրավելու այդ աշխատանքներին, մերժվում է. «...*մեզանից իմանալով, որ Խարազյանի հետ մրտադիր ենք երեքով մի ժողովածու հրատարակել, թախանձեց, որ իրեն էլ մասնակից անենք, քանի որ ինքը բավականաչափ անեկդոտներ ունի հավաքած: Չհամաձայնեցինք*»⁹, – թումանյանական իր հուշերում գրում է Ան. Արովյանը:

Իսկ թե ինչպիսի՞ նյութեր են Հովհ. Թումանյանի գրառած ժողովրդական երգիծական ստեղծագործությունները, աշխարհագրական ինչ տարածքներ են ներկայացնում դրանք եւ ինչ որակի ու արժեքի գրառումներ են, ինչպիսի՞ մոտեցում է ցուցաբերում երիտասարդ Թումանյանը ժողովրդական բանավոր մշակույթի հանդեպ, «Նոր-Դար»-ում հրապարակած նմուշները հետագայում շարունակվել են շրջանավել հայոց միջավայրում եւ այլ հարցերի պատասխանները կաշխատենք այստեղ հնարավորինս ներկայացնել:

Ըստ կառուցվածքի՝ թումանյանական ժողովրդական երգիծական ստեղծագործությունների գրառումները երկու խմբի են բաժանվում՝ *անայուժե միահիտասական եւ երկիտասական զվարճախոսություններ*, որոնց զավեշտը ստեղծվում է ուղղակի խոսքի միջոցով¹⁰, եւ *որոշակի սյուժե ունեցող զվարճապատումներ*, որոնցում անսպասելի ծիծաղը դրսևորվում է գործողության եւ ուղղակի խոսքի օգնությամբ¹¹: Ընդ որում սյուժեով զվարճապատումները գերազանցում են անայուժեին:

Լոռու մանրապատում-զվարճախոսությունների թումանյանական գրառումները միատարր չեն եւ սոսկ հայկական մի բնակավայրի պատկերը չեն ներկայացնում: Ճիշտ է, գործող անձինք լոռեցիներն են, մանրապատումներից մեկում նրանց հետ է նաև աշտարակցին, սակայն ընդգրկած հարցերի ու խնդիրների մի մասը նաև այլ տարածաշրջաններին է վերաբերում:

Երգիծապատում-զվարճախոսություններն առնչվում են գյուղի եւ քաղաքի հակասություններին, ժողովրդի ապրելակերպին, ժողովրդական ու կրոնական ծիսակարգին (հարսանիք, թաղում, Զատիկ), տարբեր տարածաշրջանների մարդկանց ու ազգությունների փոխհարաբերություններին,

⁹ «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Երևան, 1969, էջ 226:

¹⁰ **Հովհ. Թումանյան**, ԵԼԺ, հ. 5, էջ 580-588, թ. 2, 5, 8, 11, 12, 16, 18, 19 (նյութերը հավելվածում աստղանիշերով են, մենք թվերով համարակալել ենք ըստ հերթականության - Ա. Ս.):

¹¹ Անդ, թ. 1, 3, 4, 6, 7, 9, 10, 13, 14, 15, 17, 20, 21, 22:

ժողովրդախոսակցական բառերի եւ դարձվածքների զավեշտալի դրսևորումներին եւ այլն, ու այս ամենը՝ լոռեցու ինքնատիպ եւ միամիտ խոսքի ու գործողությունների միջոցով:

Միախոսական եւ երկխոսական կառույցներում զավեշտը ստեղծվում է մեկ կամ մի քանի անձանց արտաբերած ուղղակի խոսքի օգնությամբ.

«Մի լոռեցու կալումը լծած եզը կորեղ էր: Երկու օր որոնելուց հետո նա պատահողին հարցնում էր. - Տղերք, կալումը մեջքը թողուր եզն եք տեղեղ, թե չէ»¹²:

Կորցրածին փնտրելիս միամիտ գյուղացու արտաբերած՝ զավեշտ առաջացնող խոսքի հենքի վրա ստեղծված նմանատիպ բազմաթիվ տարբերակներ են շրջանառվել, որոնցից մեկն էլ պատմում է գնացքի վագոնից կախած գուդի (կտորից կարած ուսապարկ) մասին. գյուղացին գործը վերջացնելուց հետո գալիս տեսնում է՝ ո՛չ ուսապարկը կա, ոչ էլ գնացքը, եւ «երկաթգծի երկայնքով անհանգստացած ետ ու առաջ է անում ու հանդիպողին հարցնում.

«Գուդեն ոռին պոեզ չե՞ք տեղեղ...»¹³:

«Ծիծաղի տոպրակ» ժողովածուում ներկայացված գվարճապատումի առաջին մասը թումանյանականն է, երկրորդ մասը՝ դրա տարբերակային դրսևորումը: Թումանյանի գրառման մեջ ընդգծվում է կորցրած եզանը գտնելու տարբերանշանը՝ թողուտ լինելը, ժողովածուում տարբերակիչ նշանի հետ նաեւ կորած մոգու կորստյան դարդից շփոթված տիրոջ անկապ խոսքը. *«Բարի մոգի, բալբալ դաշխա (ճակատին սպիտակ նշան ունեցող) ըրիգու տեսած ըլեք, չալ չաթուն (մնագախառն բրդե կարճ թոկ) պոզին մոգին»¹⁴:*

Ժողովրդի բանավոր խոսքում անորոշություն արտահայտող, այսպես ասած, *բան*-ական կամ *իքը*-ական կառույցների անիմաստ հաճախակի կիրառության հետեւանքով մի շարք անեկոյոտներ են ստեղծվել՝ զավեշտ առաջացնելու համար դրանք գործածելով որոշակի իմաստ արտահայտող կադապարի մեջ: Թումանյանական գրառումում եւս չնայած արտաբերողի խոսքի մեջ անորոշություն արտահայտող բառը ներկայացվում է իբրեւ ընկալելի միավոր, այնուամենայնիվ, երիտասարդ գրառողը բացում է փակագծերը, այսպես ասած, «թարգմանում է», այլապես ոչ բոլոր ընթերցողներին կարող էր հասանելի դառնալ ասելիքը.

Լոռեցի հովիվը ձայն է տալիս մի սարից դեպի մյուսը, իրեն ընկերին:

¹² Անդ, էջ 586:

¹³ Ս. Քոչարյան, Զվարճապատումներ եւ իրապատումներ, Երևան, 2008, էջ 7:

¹⁴ «Ծիծաղի տոպրակ». անեկոյոտներ հայ եւ օտարների կեանքից, աշխատասիրեց դպիր Ս. Ս. Շահազիզեան, Թիֆլիս, 1892, էջ 28:

- Հեյ՛յ Համբո, Հսնմբո, ադա, քե մնադադ, էն ըքանց ըքին աաա ձեր իքն ըքեյ ա իքա ըքեյ, եկեք ըքեցեք, թե չէ էն իքը կը գա կ'ըքի, կասեք դուք եք ըքեյ, ալսինքն, էն Մարկոսանց Ղուկասին աաա ձեր էժը ծնեյ ոլ է քերեյ, եկեք տարեք, թե չէ գայլը կըգա կուրի, կասեք դուք եք կերեյ¹⁵:

Ահա նման ինքնատիպ մեկնաբանությամբ լոռեցու մի գվարճախոսություն ես՝ տպագրված շուրջ մեկ դար անց.

Համբարձումը խորի դեզի վրայից ձայնում է կնոջը.

- Ախ՛ջի՛, Վարդո՛ւշ, օրը ճաշ դառալ, էդ բանը բանովը տուր, բան արա, որ գամ բան անեմ:

Կինը փնթփնթաց.

- Այ սիրտդ սեւանա, հա՛, ոնց էլ հիշում ա, որ չորս ձու ա մնացել տանը¹⁶:

Թումանյանական գրառումներից մեկն էլ սեղմ կառուցվածքում երկխոսությունների միջոցով կարողանում է ներկայացնել թե՛ սարեցիների (տվյալ դեպքում լոռեցիների) ապրելակերպը, նիստ ու կացը, թե՛ թաղման ազգային ծիսակարգին առնչվող մի քանի դրվագներ՝ ժամ ու պատարագ անելը, հոգեհաց տալը.

Մի լոռեցի ձայն է տալիս խոզարածին.

- Հեյ, Սարո՛ւ, Սարո՛ո՛ւ, ադա, չալ մերունը դվեր արա, դվեր արա՛:

- Ադա ո՛ր չալ մերունը, ո՛ր:

- Էն որ աճարկույունը առչը բոնեյ էր:

- Ընչի՛ միտը դվեր անեմ, ընչի՛:

- Ադա սրալը մեռել ա ժամ անենք, ժան՛, ժան՛

- Ադա խի ա մեռե՛լ:

- Բղորդան ա կերեյ, բղորդան՛¹⁷:

Այս գվարճախոսությունն ասես հիշեցնում է Հր. Մաթևոսյանի սցենարով նկարահանված «Մենք ենք մեր սարերը» կինոնկարի վերջին դրվագը, երբ ոչխարի հոտը քաղաքի սպանդանոց տանող հովիվները սարեցի գյուղացիներին բարձրաձայն հաղորդակից են դարձնում իրենց կատարած «հանցանքին» ու դրա հետեւանքներին: Ինչ խոսք, գրողն անշուշտ օգտվել է ժողովրդական խոսքի մատուցման նմանատիպ ձեւից՝ ասելիքը խտացնելով այլոց համար գուցե գավեշտալի, բայց սարեցիների համար՝ սովորական-ա-նօրեական երկխոսության մեջ:

¹⁵ **Հովհ. Թումանյան**, ԵԼԺ, հ. 5, էջ 581:

¹⁶ «Պատմում ու կատակում էր Գալուստ Գալստյանը», Երևան, 1994, էջ 32:

¹⁷ **Հովհ. Թումանյան**, ԵԼԺ, հ. 5, էջ 582:

Կտրվածությունը կրոնական եւ ժողովրդական ծիսակարգից ու ազգային արմատներից շատ դեպքերում ծիծաղելի միջադեպերի եւ զավեշտալի պատումների ստեղծման տեղիք է տալիս: Թումանյանի գրառած զվարճախոսություններից մեկն էլ առնչվում է Զատիկի ծիսակարգի ժամանակ ասվող *Քրիստոս հարյալ ի մեռելոց* խոսքին եւ *Օրհնյալ է հարությունը Քրիստոսի* -ի փոխարեն արտաբերված զավեշտալի պատասխանին:

*Զարկին լողըցի հովվին ասացին՝ Քրիստոս հարյալ ի մեռելոց – հա՛, մեռելոց, – համաձայնվեց հովիվը*¹⁸:

Շուրջ 100 տարի անց այդ պատումի՝ մեր գրառած տարբերակներից մեկի զավեշտը եւս քրիստոնեական ծիսակարգին անհաղորդ լինելու, ինչպես նաեւ գրագիտության պակասի հետեւանքով է: Եթե առաջինում ծիծաղ հարուցողը կյանքը սարերում անցկացնող անգրագետ հովվի խոսքն է, ապա մերօրյա գրառումը կապված է քաջնագարական մտածողությամբ քաղաքապետի պաշտոնական փոխհարաբերություններին հատուկ խոսքային արտահայտության հետ:

Զարկի օրը Վանաձորի քաղաքապետարանի աշխատողներից մեկը ներս ա մըրնըմ քաղաքապետի աշխատասենյակն ու ասըմ՝

Քրիստոս հարյալ ի մեռելոց:

Դարբինյանը վրա յա բերըմ՝

- Գնա՛, գնա՛, ախչիկ ջան, ինձ արդեն էդ մասին զեկուցե՛լ են՝

Թումանյանական գրառումներում հանդիպում ենք նաեւ հարսանեկան ծիսակարգին առնչվող երկու ստեղծագործության, որոնցից մեկում ներկայացված է քաղաքի մարդկանց «անսովոր» հագուկապն ու *գարդարվածությունը* տեսնելուց հետո գյուղացու՝ զավեշտ առաջացնող զարմացական խոսքը:

*- Պաս՛, պս՛, պս՛, ձեզ մասրադ, քաղկցիք չիմ էլ նոր են հրսանիք էլել*²⁰:

Պարզամիտ գյուղացու զարմանքը արդարացված էր. ի տարբերություն քաղաքների՝ գյուղերում մարդիկ նոր հագուստներ էին հագնում եւ զարդեր կրում հիմնականում ժողովրդական տոնախմբությունների կամ էլ հարսանեկան ծիսակատարությունների ժամանակ, ինչն էլ, բնականաբար, կապված էր ԺԹ. դարի երկրորդ կեսերին առկա՝ գյուղաշխարհի մարդկանց սոցիալական ծանր վիճակի հետ:

¹⁸ Անդ, էջ 586:

¹⁹ Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու, այսուհետև մեջբերվող նյութի կողքին փակագծում կնշվի համառոտագրությունը՝ ԱՄՇՀ:

²⁰ Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 5, էջ 583:

1997 թ. նմանատիպ մի արտահայտության (կրկին լռեցու, այս անգամ երեխայի շուրթերից հնչած) ունկնդիր եղա Ախթալա կայարանում մի թաղման արարողության ժամանակ: Հնգամյա երեխան, թեքվելով դեպի պապը եւ ցույց տալով փայլուն կոշիկներս, ցածրաձայն ինչ-որ բան շնչաց նրա ականջին: Պապը սաստեց թոռանը, ինչն իմ աչքից չվրիպեց, ու հարցրի. «Ի՞նչ ասավ երեխեն, *Դավիթ*»: Պապը հրաժարվեց կրկնել երեխայի ասածը, բայց երբ ես համատեցի, ստիպված էր կրկնել նրա խոսքը. «*Էդ պապիկի կոշիկները մեռլի կոշիկներ են, չէ, պապի*» (ԱՄՇՀ):

Խորհրդային կարգերի փլուզումից հետո Հայաստանի գյուղերում ստեղծված սոցիալական ծանր վիճակն էր պատճառ դարձել նման զավեշտալի «մեկնաբանության»: Այդ տարիներին գյուղաշխարհի երեխան նոր հագուկապ տեսնում էր միայն թաղման արարողությունների ժամանակ, այն էլ հանգուցյալի հագին....

Ժողովրդական ասույթաբանության կիրառության ժամանակ ասելիքի ականա սխալ արտաբերումը երբեմն զավեշտալի միջադեպերի ու անսպասելի ծիծաղի առաջացման առիթ կարող է հանդիսանալ: Թումանյանական գրառումներում *օրհնանքա-անեծքային* կառուցվածքով է ստեղծված «*Լորցու օրհնանքը*» պատումը, որտեղ խոսակցի կողմից արտաբերված օրհնանքն ընկալվում է նաեւ իբրեւ անեծք.

Մի լորցի անցնելիս հարեւանը հրավիրում է թաժա հաց ուրելու. «Աղւ՛, Սարք դեւրն արի՛, րաք հաց կրրի՛». – Շնորհակալ եմ քի մաւրադ, խադադ եմ, ձեր րաք հացը Ասրո՞ծ կրրի, – պապասխանում է անցվորը²¹:

Օրհնանքա-անեծքային կառուցվածքով երգիծական մանրապատումների հանդիպում ենք նաեւ այլ տարածաշրջանների հայերից կատարված գրառումներում, ինչպես, օրինակ, վանեցիներից Ի. դարասկզբին գրառած «*Ինչըիս տյու իմ շորեր չորցուցիր*» պատումը²², երբ արած լավության դիմաց լավություն անողը «օրհնվում է». «*Ինչըիս տյու իմ շորեր չորցուցիր, ասարվածն էլ քե չորցուցի*» «օրհնանքով»: Նմանատիպ նյութեր գրառել ենք նաեւ վերջին 20-25 տարիներին, որոնցից մեկում «օրհնվում» է Երեւանի Սարի թաղի ոլորաններում ավտոբուսը կանգնեցնող վարորդը՝ մեծահասակ կնոջ կողմից ստանալով «*Ասրեն, րալա ջան, դուն ինձ վեր կալար, թող Ասրված էլ քեզ վեր ունի*» (ԱՄՇՀ) պարգև-օրհնանքը: Մյուսում «օրհնանքը» ուղղված է տան վառված լամպը փոխողին. «*Ասրեն, րալա ջան, դուն իմ տունը լուսավորեցիր, Ասրված էլ թող քու ֆոքին լուսավորի...*» (ԱՄՇՀ), կամ էլ՝ «*Վսյ, Վարդ-*

²¹ Անդ, էջ 580:

²² «Պատումն ու կատակում էր Գալուստ Գալստյանը», Երեւան, 1994, էջ 32:

գեա ջան, դու որ մեր ըրեխին կրակիցը փրգեցիր, թող կրակ վեր գա քու վրա» (ԱՍՇՀ):

Ի դեպ, հայ ժողովրդական երգիծապատումներում հանդիպում ենք նաև սրա հակառակ երևույթին, երբ անեծքն է ընկալվում իբրեւ օրինանք.

Քյավառցին արաղը լցնում ա բաժակի մեջ, բաժակի վրա խաչ ա հանում, ասում.

- Էհ, գնալըդ ըլի, յեպ գալըդ չըլի (ԱՍՇՀ):

Այդ անեծքի հենքի վրա ստեղծված գվարճապատումը՝ իբրեւ օրինանք, կիրառվում է նաև հիվանդի՝ հիվանդանոցից դուրս գրվելիս: Սակայն սա էլ հարաբերական է, քանզի այդ անեծք-օրինանք-մաղթանքը ծննդատնից դուրս գրվողներին երբեք չեն ասում:

Հովհ. Թումանյանը հայրենի բնաշխարհի մարդկանց համով-հոտով երգիծանքը միայն ներկայացնողի դերում չի հանդես գալիս: Երգիծական մանրապատում-գվարճախոսություններում արդեն իսկ պարզորոշ նկատելի է ապագա մեծ մտածողի եւ վերլուծաբանի՝ ոչ միայն բանահավաքչական գործունեության ասպարեզում ունեցած հետաքրքրասիրությունը, այլեւ ազգային արժեքների, մասնավորապես հայոց բառ ու բանի հանդեպ ունեցած անհագ սերը, բանագիտական պրպտումներն ու առողջ եզրահանգումները:

Ժողովրդական ստեղծագործությունը մատուցելիս նա նաև այս կամ այն գյուղին ու նրա մարդկանց ոգուն համապատասխան տրված մականունների կամ էլ կրկնակ մականվան, տվյալ պատումի տեսակի, նրա շրջանառվող տարբերակի ու վերջինիս առավել հաջողված լինելու եւ դրա պատճառների վերաբերյալ տեղեկություններ է հաղորդում, որոշ օտար եւ բարբառային բաների բացատրությունն է տալիս, երբեմն էլ գրական բառն է մեկնաբանում փակագծում նշելով վերջինիս՝ այդ ժամանակ ժողովրդին ընկալելի օտար անվանումը:

Թումանյանի գրառած անեկդոտ-գվարճախոսություններում Լոռու տա-րածաշրջանի գյուղերը ներկայացվում են միմյանց հետ ունեցած փոխհարաբերություններում: Դրանց հերոսները կան Լոռու բնակչությանն ընդհանրացնող *լոռցի*-ներն են, կան Լոռու եւ հարեւան տարածաշրջաններում գավեշտի աղբյուր հանդիսացող գյուղերն (*Կուրթան, Աբորի*) ու դրանց հայտնի գվարճախոսները (*Սերգո, Համբո*):

Հովհ. Թումանյանը Լոռու գյուղերն ու գյուղացիներին ներկայացնելիս երկու պատումում մատնանշում է նաև նրանց տրվող մականուն-ծաղրանունները՝ *թուրքաւաճանակ* դստեցիք (տողատակում գրառողը տալիս է նաև հայրենի գյուղին տրվող երկրորդ ծաղրանուն-մականունը՝ *դսեղոց մարդաս-*

սրան էլ են ասում²³), սասանափրուն ջալալօղլեցի²⁴, ագոսափսկեր կուրթանեցիք²⁵...

Ի դեպ, մի քանի տարի անց հրատարակված Սմբատ Շահագիզյանի աննկղոտների գրքում տեղ է գտել «*Բորչալուի եւ Լոռուայ գիւղերը իրենց համանիշ բնատրութիւններով*» նյութը, որոնց մեջ 49 գյուղերի շարքում տեսնում ենք նաև վերը բերված գյուղերի ծաղրանունները, սակայն այլ բնորոշումներով: Այսպես, օրինակ՝

Հուգդուն (բազէի մի տեսակ) ուրող կուրթանեցիք,

Գիլան խեղդող դստեցիք,

*Թանգ միկիսրան, տրիցարկի տակը մոմ հալող ջալալ-օղլեցիք...*²⁶

Իր գրառած գվարճապատումներից մեկում²⁷ Հովհ. Թումանյանը նշում է նաև բանահյուսության այդ տեսակի՝ տարածում գտած օտար անվանումը՝ աննկղոտ: Գրական ասպարեզ դեռ ուրք չդրած երիտասարդ Թումանյանը ներքին բնագոյով կարողանում է երգիծական մանրապատումների ժանրային ճիշտ (թեկուզե օտարալեզու) բնորոշումը տալ: Իմիջիայլոց նշենք նաև, որ այդ ժամանակ դրանց ժողովուրդը *սոսակ* էր ասում: Հենց դա է եղել պատճառը, որ վաստակաշատ ազգագրագետ եւ բանահավաք Երվանդ Լալայանը 1903 թ. տպագրած իր՝ Լոռու գվարճախոսներից մեկին նվիրված գրքույկը, որտեղ ընդգրկված են նաև թումանյանական գրառումներից մի քանիսի (թ. 7, 20, 21) հորոսյան տարբերակները, վերնագրել է «*Ժողովրդական սոսակներ. Հորոս*»²⁸: Թումանյանը եւս, Ան. Աբովյանին գրած նամակներից մեկում, համեմատելով մեկի միեւնույն քարոզ-պատարագը կրկնելու գործողությունը, օգտագործում է աննկղոտի՝ ժողովրդի մեջ շրջանառվող «սոսակ» եզրույթը. «Ասում է «Էս չէլավ, մի ուրիշը բերեք» երեխա մկրտող քահանայի *սոսակը*»²⁹:

Բանահավաք Թումանյանը ներկայացնում է նաև աննկղոտներից մեկի աշտարակյան տարբերակը՝ ոչ միայն ընդգծելով վերջինիս առավել հաջող եւ հղկված լինելը, այլև տարածաշրջանի մարդկանց բնորոշ գծերը (*ճարպիկ լեզու եւ սրամրություն*), որոնցով էլ պայմանավորում էր դրա հաջողվածությունը. «*Բայց այս աննկղոտը*, – գրում է Թումանյանը, – *աշտարակցին պատմում է ուրիշ կերպով. վեճը միեւնույն ստարկայի վերա է. միայն այս դեպքում*

²³ Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 5, Երևան, 1994, էջ 584:

²⁴ Անդ:

²⁵ Անդ:

²⁶ «Ծիծաղի տոպրակ», Աննկղոտներ հայ եւ օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Շահագիզեան, Թիֆլիս, 1892, էջ 143-145:

²⁷ Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 5, էջ 583:

²⁸ «Ժողովրդական առակներ», Հորոս, հաւաքեց Ե. Լալանեան, Թիֆլիս, 1903:

²⁹ Հովհ. Թումանյան, ԵԺ, հ. 5, էջ 26:

հաղթողը աշտարակցին է: Աշտարակցիները հայրնի են իրենց ճարպիկ լեզվով և սրամտությամբ: Մեր իմացած դեպքում աշտարակցին վերա է տրվում՝ Ուշի, Օշական, Փարբի, Բյուրական, Թալին, Թալիշ, Մասարառ, գրալի պոչը դնան արա»³⁰:

Ի դեպ, վերջերս Երևանում մեր կողմից այս երգիծապատումի մեկ այլ տարբերակ է գրանցվել, որտեղ յոթ գյուղերի արագ-արագ թվարկման ժամանակ լոռեցին հանդես է գալիս իր բարբառին յուրահատուկ երգեցիկ-երկարացման հնչերանգով, ինչն էլ դառնում է այդ մանրապատումի զավեշտի հենքը.

Հերթը գալիս ա լոռեցուն: Լոռեցին ծոր տալով սկսում ա.

- Էնա հասա՛ն Օձոնը, Էնա հասա՛ն Մարցը, Էնա հասա՛ն Քարինջը..., հեյրո վերջացնում է այսպես՝

- Ես ուրեմեմ, դոն թամաշ արասա՛ն... (ԱՍՇՀ) :

Չնայած Լոռու խոսվածքում երգեցիկ հնչերանգային խոսքը միշտ էլ առկա է եղել, այնուամենայնիվ թե՛ թումանյանական գրառումներում, թե՛ հետագայում տպագրված անեկդոտների այլևայլ ժողովածուներում լոռեցուն բնորոշող նման հնչերանգի միջոցով անսպասելի ծիծաղ առաջացնող երգիծապատում-զվարճախոսությունները բացակայում են: Դրանք հիմնականում վերջին 40-50 տարիների արգասիք են, ինչպես, օրինակ, ստորև ներկայացվող նմուշները՝ գրառված 1960-ականների վերջերից մինչև մեր օրերը.

- | | |
|--|--|
| 1. - Անձրեւ ա գալի:
- Դոանըըը... (ԱՍՇՀ) | 2. - Ներեցեք ծննդատունը որտեղ է:
- Կընատոող... (ԱՍՇՀ) |
| 3. - Մանկապարտեզը որտեղ է:
- Ըրեխաաանց... (ԱՍՇՀ) | 4. - Ձվածեղ սարքեմ:
- Ձվոռով... (ԱՍՇՀ) |
| 5. - Գետի վրա կամուրջ են սարքում:
- Լենքովորի... (ԱՍՇՀ) | 6. - Կոշիկըս սելամըմ ա:
- Ոտիիիղ... (ԱՍՇՀ) |
| 7. - Տղես դիպլոմատ ա աշխատում:
- Ձեռիիի... (ԱՍՇՀ) | 8. - Քանի՛ երեխա ունես:
- Մարթիցըըըն... (ԱՍՇՀ) |

Թումանյանական գրառումներում զավեշտն ստեղծվում է հիմնականում մի բան տեսնելուց կամ որեւէ գործողությունից հետո լոռեցու միամիտ դատողությունն ընդգծող խոսքի կամ էլ գործով արձագանքելու միջոցով.

- Քյոխվա ջան, գլխիդ դուրբան, որ ես խոզ ըլեմ դու շուն, ձեր դոնովն խրթխրթալե անցկենալիս հասնիլ չնա բուղըս ճոթիլ:

³⁰ Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 5, էջ 583:

«Ձէ, էս քալամի սասածն էլ ա ըղորթ», – վճռեց քյոիվէն եւ տուգանքից ազատեց շնատիրոջը³¹:

- Ըրմանըմ եմ ես ձեզանից, քա մարթիկ չեք, հաց չեք ուրբւմ, էս ինչ դժար իմանալու քան ա, ով որ էս պարը քանդել ա նա կյի տարած: - Ա՛յ, այ, որ սաի քյոիվէն կգիղենա, դարձան միմյանց կանգնողները³²:

Այժմ 130 տարի հետո էլ ենք հեռավոր գյուղերի բնակիչների, մասնավորապես լոռեցիական նմանատիպ «եզրահանգումների» հանդիպում.

Գեղամիջում կանգնած տղաները տաք-տաք վիճում էին, թե Լենինն ինչ գործով էր գնացել Ֆինլանդիա:

- Գնանք Փուրոյին հարցնենք, նա կարդացած տղա յա, կիմանա, - առաջարկում է մեկը:

Փուրոն ուշադիր լսում է կողմերի կարծիքները եւ լուրջ տոնով սատում իր հեղինակավոր խոսքը.

- Լենինը Ֆինլանդիա շար կարեւոր գործով կրկեր գնացած, նա հենց ըն-հենց չէր գնա...³³

Թումանյանական հուշապատումներում հաճախ կարելի է հանդիպել պայծառ տիրույթյալք ծիծաղ առաջացնող «գիքորացու» կերպարների:

Մի անգամ Հովհ. Թումանյանը ընկերների հետ Մոսկովի գեղատեսիլ ձորն է իջնում: Բալա Գիքորը հարցնում է ոչխարներ պահող մի երեխայի.

- Տղա՛ ջան, ոչխարդ ինչ արժի, ուզում եմ մինն առնեմ

- Մի մանեթ մի արասի:

Բալա Գիքորը վճարում է գումարը, ոչխարը վերցնում, եւ գետի ափին նստում են հացի: Վերջում երեխան մոտենում է Բալա Գիքորին, թե.

- Բենի, ոչխարի մորթին ծախիլ չեմ:

- Վեց արասով կծախեմ (դա նույն մի մանեթ մի արասին է):

Երեխան տալիս է ձեռքի եղած փողը եւ վերցնում ոչխարի մորթին:

Թումանյանն իր մոտ է կանչում երեխային ու հարցնում

Դպրոց գնացել եմ, քալիկ ջան:

- Ձէ՛, չեմ գնացել:

- Դե փողերդ էլ վերցրու, ոչխարիդ մորթին էլ ու կգնաս հորդ կասեմ՝ քեզ անպայման դպրոց ուղարկի³⁴:

Կրկին վերհիշենք «Գիքորի» նկարահանման համար գլխավոր հերոսի երկարատև փնտրտուքը: Հենրիկ Մալյանը, Սոս Սարգսյանը եւ Սերգեյ Իս-

³¹ Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 5, էջ 580:

³² Անդ, էջ 582:

³³ Ս. Քոչարյան, Զվարճապատումներ եւ իրապատումներ, Երևան, 2008, էջ 49-50:

³⁴ Անդ, էջ 81-82:

րայելյանը մոտ ութ հազար երեխաների փորձելուց հետո Սոսի խորհրդով գնում են Դսեղ ու ֆուտբոլ խաղացող երեխաներից մեկին հարցնում.

- Ո՞ր դասարանում ես սովորում, բայիկ ջան, - հարցնում է Հենրիկ Մալյանը:

- Մեր դասարանում եմ սովորում, ո՞ր դասարանում եմ սովորում, - պատասխանում է երեխան:

- Այ սա է Գիքորը, ես գրաւ իմ Գիքորին, - հայտարարում է Սոս Սարգսյանը³⁵:

Այսօր էլ կարելի է հանդիպել լեռնային գյուղերի մարդկանց, հատկապես երեխաների պարզամտության ու գուլալության բազմաթիվ դրսևորումների, որոնք մեր իրականությանն անհարիր են, գուցե նաեւ ոմանց համար՝ զավեշտալի: Թումանյանական այս իրապատումներից շուրջ 80 տարի անց նման մի դրվագի նկարագրության էլ հանդիպում ենք սեւակյան հուշապատումներից մեկում.

Երեւանից Չանախչի գնալիս Պարույր Սեւակը կանգնեցրել է տալիս մեքենան եւ ուզում է ծիրան վաճառող պատանուց մի դույլ հասած ծիրան գնել:

- Բայիկ ջան, ի՞նչ արժի դույլը, - հարցրեց Էմման:

- Հինգ կամ իրեք:

Հո չենք ծիծաղում, հո չենք ծիծաղում

- Ո՞վ ասաց, որ այդ գնով վաճառես, - հարցրեց Պարույրը:

- Ագին ասաց, որ այդ գնով չստնեն, երեքով փութ:

- Գուցե հինգով էինք ստնում, ինչո՞ւ երեք ասացիր:

- Մոյր ասեմ

- Բո ճշրի համար առ քեզ հինգ ռուբլի, - փողը պարզեց Պարույրը:

- Ինչո՞ւ հինգ փվեցիր, - ներեց Էմման:

- Բա այսքան ծիծաղը երկու ռուբլի չարժե՞ր, - պատասխանեց Պարույրը:

- Հիմար երեխա էր, - ասաց Էմման:

- Մաքրուր երեխա էր, - ասաց Պարույրը³⁶:

Անփութենք, Հովհ. Թումանյանը Լոռու բանավոր ավանդույթների եւ բառ ու բանի անմիջական կրողն է եղել, ինչն էլ, անշուշտ, հետագայում ապագա գրողին օգնել է դառնալու նաեւ կրողը ժողովրդի խտացված պատկերավոր խոսքի, իր մեջ ամբարելու նրա կենսասիրությունը, ծով համբերությունն ու անսահման լավատեսությունը, աշխարհի ու մարդու հոգսերն ու ցավերը ծի-

³⁵ Անդ, էջ 103:

³⁶ Գ. Չալիկյան, Ապոլոնի սիրահարը, Երեւան, 2000, էջ 103-104:

ծաղի պրիզմայով տեսնելու շնորհքը՝ առկեցուն ժողովրդական իմաստնությունը:

Տարիներ անց նա էլի էր օգտվելու բանահյուսական գոհարներից, բայց դրանք մատուցելու էր ժողովրդականի մեջ թաթախված թումանյանական չնաշխարհիկ բառ ու բանով, կենդանի ժողովրդախոսակցական լեզվով, էլի էր անդրադառնալու գվարճապատումներին («Սուտիկ որսկանը», «Կիկոսի մահը», «Բարեկենդանը»...), բայց դրանք կրկին ժողովրդին էր վերադարձնելու բյուրեղացրած արեւելահայերենով՝ համեմված համով-հոտով հայոց ժողովրդական խոսքով:

РЕЗЮМЕ

Мало кому известно, что первые напечатанные работы известного армянского писателя Ованеса Туманяна были на юмористические темы о лорийских армянах. Фактически дебют писателя осуществляется в области фольклора.

Туманяновские записи армянских народных юмористических миниатюр и прибауток ясно показывают, что Ов. Туманян был прямым носителем устной традиции и словестного фольклора своего народа.

В записях юмористических миниатюр Туманяна сразу видно не только заинтересованность к аспекту собирательских деятельности будущего писателя, мыслителя и аналитика, его фольклористические искания и здоровые выводы, но и бесконечная любовь к народному наследию, в частности к армянскому словестному фольклору.

SUMMARY

It is hardly known that the first printed works of the prominent Armenian writer Hovhannes Tumanian were in humoristic topics towards Lori Armenians. In fact the debut of the writer was realized in the sphere of folcloristic.

The Armenian popular jokes recorded by Hovhannes Tumanian show clearly that Tumanian had perfectly known the oral tradition and the folklore of his people.

In the funny stories and popular jokes recorded by him, not only the curiosity and talent of the writer in the study of oral tradition of his people is evident but also his huge love towards the national values in particular to Armenian folklore.

